ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

21. դեկտեմբերի 2024թ.

N 413-Ա

ՀՐԱՄԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության փորձագետների աշխատանքային ծրագրերը համաձայն 1-2 հավելվածների:

Ստորագրող
ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2903800432

2024-12-21 16:26:44 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՎԱՀԵ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
« 27 » դեկտեմբերի 2024թ. N 413-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ (ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1. 1 Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է 2024 թվականի պետական բյուջեի նկատմամբ հսկողության տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների շարունակականությունն ու անընդհատությունն ապահովելու, դրանք «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ժամկետներում ավարտելու և ամփոփելու հանգամանքով:

2. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հսկողության 2024 թվականի ծրագրով նախատեսված ստուգումների կատարում:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾԸ

3.1 Պայմանագիրը կնքելու պահից մինչև 2025 թվականի մարտի 28-ը ներառյալ:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

4.1 Փորձագետի ներգրավմամբ ակնկալվում է վերջինիս մասնակցությամբ իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կարգապահության ապահովման նկատմամբ հսկողության

շրջանակում իրականացնել ստուգվող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված միջոցների նկատմամբ ֆինանսական, այդ թվում՝ ստուգումների միջոցով անհրաժեշտ վերահսկողություն և ներկայացնել դրանցից բխող համապատասխան առաջարկություններ:

4 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1 Փորձագետի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը նախատեսվում է ներկայացնել պայմանագրի ժամկետը լրանալու նախորդ օրը:

5 ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6.1 Աշխատանքների գնահատման չափանիշներն են՝

6.1.1 գործող օրենսդրությանը ստուգվող կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանության գնահատում.

6.1.2 «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ժամկետներում ստուգումների ամփոփում.

6.1.3 ստուգումներով արձանագրված գումարների վերականգնման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում և հաշվետվությունների կազմում:

6.2 Փորձագետի կողմից կատարված աշխատանքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6 ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7.1 Փորձագետին ներկայացվող պահանջներն են՝

7.1.1 Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

7.1.2 շինարարություն և ճարտարապետություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն.

7.1.3 առնվազն երեք տարվա հանրային ծառայության ստաժ կամ առնվազն տասը տարվա վերահսկողական կամ աուդիտորական բնագավառում աշխատանքային փորձ.

7.1.4 իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն («Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Քաղաքաշինության մասին» օրենքներ, Հայաստանի Հանրապետության կառավարության

2002 թվականի հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման հսկողության կարգը սահմանելու մասին» N 1112-Ն որոշում և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտեր).

7.1.5 թիմային աշխատանքի ունակություն.

7.1.6 տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կառավարման ունակություն.

7.1.7 հաշվետվությունների կազմման և ներկայացման ունակություն:

8⊠ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Փորձագետի պարտականություններն են՝

8.1.1 Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կարգապահության ապահովման նկատմամբ հսկողության իրականացում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված միջոցների, ինչպես նաև համայնքների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված բյուջետային միջոցների նկատմամբ ֆինանսական, այդ թվում՝ ստուգումների միջոցով անհրաժեշտ վերահսկողության իրականացում և դրանցից բխող համապատասխան առաջարկությունների ներկայացում.

8.1.2 Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նախաքննության կամ հետաքննության մարմնի որոշումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին համապատասխան դատարանի որոշումներով նշանակված ստուգումներին (վերստուգումներին) մասնակցություն.

8.1.3 Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հանձնարարականների հիման վրա ստուգումների, վերստուգումների և ուսումնասիրությունների իրականացում:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«21» դեկտեմբերի 2024թ. N 413-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1.1 Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է 2024 թվականի պետական բյուջեի նկատմամբ հսկողության տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների շարունակականությունը և անընդհատությունն ապահովելու, դրանք «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ժամկետներում ավարտելու և ամփոփելու հանգամանքով:

2. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հսկողության 2024 թվականի ծրագրով նախատեսված ստուգումների կատարում:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

3.1 Պայմանագիրը կնքելու պահից մինչև 2025 թվականի մարտի 28-ը ներառյալ:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

4.1 Փորձագետի ներգրավմամբ ակնկալվում է վերջինիս մասնակցությամբ իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կարգապահության ապահովման նկատմամբ հսկողության շրջանակում իրականացնել ստուգվող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված միջոցների նկատմամբ ֆինանսական, այդ թվում՝ ստուգումների միջոցով անհրաժեշտ վերահսկողություն և ներկայացնել դրանցից բխող համապատասխան առաջարկություններ:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1 Փորձագետի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը նախատեսվում է ներկայացնել պայմանագրի ժամկետը լրանալու նախորդ օրը:

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6.1 Աշխատանքների գնահատման չափանիշներն են՝

6.1.1 գործող օրենսդրությանը ստուգվող կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանության գնահատում.

6.1.2 «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ժամկետներում ստուգումների ամփոփում.

6.1.3 ստուգումներով արձանագրված գումարների վերականգնման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում և հաշվետվությունների կազմում.

6.2 Փորձագետի կողմից կատարված աշխատանքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7.2 Փորձագետին ներկայացվող պահանջներն են՝

7.1.1 Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

7.1.2 բարձրագույն կրթություն, տնտեսագիտություն մասնագիտությամբ.

7.1.8 առնվազն երեք տարվա հանրային ծառայության ստաժ կամ առնվազն տասը տարվա վերահսկողական կամ աուդիտորական բնագավառում աշխատանքային փորձ.

7.1.9 իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն («Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման հսկողության կարգը սահմանելու մասին» N 1112-Ն որոշում և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտեր).

7.1.10 թիմային աշխատանքի ունակություն.

7.1.11 տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կառավարման ունակություն.

7.1.12 հաշվետվությունների կազմման և ներկայացման ունակություն:

8⊠ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.2 Փորձագետի պարտականություններն են՝

8.1.1 Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կարգապահության ապահովման նկատմամբ հսկողության իրականացում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված միջոցների, ինչպես նաև համայնքների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված բյուջետային միջոցների նկատմամբ ֆինանսական, այդ թվում՝ ստուգումների միջոցով անհրաժեշտ վերահսկողության իրականացում և դրանցից բխող համապատասխան առաջարկությունների ներկայացում.

8.1.2 Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նախաքննության կամ հետաքննության մարմնի որոշումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին համապատասխան դատարանի որոշումներով նշանակված ստուգումներին (վերստուգումներին) մասնակցություն.

8.1.3 Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հանձնարարականների հիման վրա ստուգումների, վերստուգումների և ուսումնասիրությունների իրականացում: